

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

Հանրապետությունում աղքատության հաղթահարման տեսանկյունից հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է զբաղվածության մակարդակի բարձրացումը, որի լուծման ուղղություններից է հանդիսանում արհեստագործության զարգացումը: Հաշվի առնելով գյուղատնտեսության սեզոնայնությունը և այն հանգամանքը, որ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը զուգընթաց, խնդիր է առաջանում ավելցուկ ագրարային բնակչությանը աշխատատեղերով ապահովելու՝ հատկապես կարևորվում է գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալումը, ինչը մեծապես կնպաստի տարվա ընթացքում աշխատուժի համաչափ օգտագործմանը, գյուղերում զբաղվածության մակարդակի բարձրացմանը (ինքնազբաղվածների թվի աճին), գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը: Արհեստագործության զարգացմանն ուղղված միջոցառումներ են նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող 2004-2006 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N100-Ն որոշման 255 կետով և Հայաստանի Հանրապետության 2004թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N1922-Ն որոշման 226 կետով,

Արհեստագործություն - ժողովրդական ստեղծագործության դրսևորումներից է, որին բնորոշ է կիրառական և դեկորատիվ գեղարվեստական արժեք ներկայացնող իրերի պատրաստումը և ծառայությունների մատուցումը՝ փոքր ծավալներով կամ անհատական պատվերներով, առավելագույնս օգտագործելով ձեռքի աշխատանքը և անհատական հատուկ գիտելիքները, հմտությունների և ունակությունների ստեղծագործական կիրառումը, որպես կանոն բացառելով աշխատանքի բաժանումը, միաժամանակ նպաստելով ժողովրդական արվեստների և արհեստների ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև բավարարելով բնակչության նյութական և հոգևոր պահանջմունքները :

Արհեստագործության զարգացումը կարևորվում է նաև ժառանգականության տեսանկյունից: Ըստ էության ժառանգականությունը հանդիսանում է բնական, տնտեսական, սոցիալական և մարդկային գործունեությունների մի մաս: Այս առումով արհեստագործության զարգացումը կերաշխավորի ունակությունների և հմտությունների (արհեստները, երաժշտությունը, դիցաբանությունը, ազգային ավանդույթները, յուրահատուկ սննդատեսակների արտադրությունը և այլն) ապագա սերունդներին ժառանգաբար փոխանցելու գործընթացը:

Արհեստագործության զարգացումը հանրապետությունում կարևորվում է նաև զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև միջազգային հանրության մեջ երկրի մշակութային վարկի բարձրացման տեսանկյունից:

Արհեստագործության ոլորտը ունենալով զարգացման բավականին մեծ ներուժ և արտահանման ուղղվածություն, կնպաստի տնտեսական աճին և արտաքին առևտրաշրջանառության ծավալների մեծացմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ նախանշվում են արհեստագործության զարգացման նախադրյալները և իրական ուղղությունները: Այդ գործընթացը անշրջելի բնույթ է կրում և կարող է ազգաբնակչությանն ապահովել արժանավայել կենսապայմաններ, տնտեսական բարգավաճման և արհեստագործության ազատ զարգացման անհրաժեշտ պայմաններով: Հայաստանի ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, քաղաքակիրթ զարգացման լիարժեք մասնակցի իրավունքով՝ պետք է լինի ինչպես քաղաքական անկախության, այնպես էլ ազգային յուրահատկությունների և մշակութային ավանդույթների պահպանման միջոցով, զարգացած քաղաքացիական հասարակությամբ և իրավական պետությամբ:

Այդ տեսանկյունից կարևորվում է.

արհեստագործության՝ որպես արտադրության շարժիչ ուժի խթան, շուկայի ստեղծումը և զարգացումը.

հասարակական արտադրության համակարգում արհեստագործության ենթակառուցվածքի ստեղծում և դերի բարձրացում.

արհեստագործության լիիրավ մասնակցությունը տարածաշրջանների և ազգերի տնտեսական ինտեգրացիայի գործընթացներում, կրթության մակարդակի, մշակութային զարգացման մակարդակի բարձրացում՝ ի հաշիվ միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակում արհեստագործական արտադրության հնարավորությունների ընդլայնման և համապատասխանաբար

արհեստագործական համակարգերի (հմտությունների), արհեստավարժության և որակավորման դերի բարձրացումը՝ որպես աշխատանքի կարևորագույն բնութագրիչ ծառայություն:

Վերոնշյալը որոշում է արհեստագործության նկատմամբ վերաբերմունքի փոփոխության անհրաժեշտությունը, մարդկային ներուժի ուժեղացման և նրա զարգացման մի շարք ուղղություններում արհեստագործական արտադրության կիրառման հնարավորությունների ընդլայնումը և խոցելի «կետերի» բացահայտումը, որոնք կապահովեն արհեստագործին հարմարվելու շուկայական տնտեսության պայմաններին և ծավալելու բնականոն գործունեություն:

Ներկայումս արհեստագործության վրա տարածվում է փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության շրջանակները, որի հիմքը սահմանվում է ՀՀ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով:

Այսպիսով, արհեստագործին կարելի է համարել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի սուբյեկտ, որը որպես կանոն, զբաղվում է ձեռքի աշխատանքով՝ իրերի արտադրությամբ և ծառայությունների տրամադրմամբ սեփական աշխատանքի գործիքների միջոցով:

2. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ և ՀԻՄՆԱՆԳԻՐՆԵՐԸ

Արհեստագործությունը համարվում է ժամանակակից բազմաշերտ շուկայական տնտեսության կարևորագույն հատվածներից մեկը և ընդունակ է ապահովելու մասնավոր տնայնագործ-արհեստագործների թվաքանակի աճ, որոնք բարենպաստ նախադրյալներ են ստեղծում փոքր ձեռնարկատիրության զարգացման և արդյունավետ մրցակցային միջավայրի ստեղծման համար: Նրանց ճկունությունը և շարժունակությունը թույլ է տալիս լուծելու բազմաթիվ տնտեսական և սոցիալական հիմնախնդիրներ ու ապահովել բնակչության առավելագույն զբաղվածություն, այդ թվում տարբեր մտավոր ընդունակություններ, ֆիզիկական հնարավորություններ, տարբեր մասնագիտական հետաքրքրություններ ունեցող մարդկանց ստեղծագործական ներուժի լիակատար օգտագործում: Արհեստագործության զարգացումը նպաստում է բնակչության կենսամակարդակների տարբերակման և եկամուտների բևեռացման կրճատմանը, որն էլ իր հերթին սոցիալական կայունության նախադրյալ է ստեղծում:

Ինչպես վկայում է պատմությունը, ցանկացած սոցիալ-քաղաքական ֆորմացիաներում հասարակության մեջ շարունակում են պահպանել արհեստագործության զարգացման նախադրյալները: Տվյալ պահին արհեստագործությունը կորցրել է իր գերիշխանությունը, որպես արտադրության համակարգ, սակայն այն շարունակում է գոյատևել շատ երկրներում, ստանալով պետական աջակցություն, որպես փոքր ձեռնարկատիրության կամ ինքնուրույն արտադրության համակարգ:

Այնպիսի երկրների փորձը, ինչպիսիք են Գերմանիան, Թուրքիան, Հնդկաստանը, որտեղ շուկայական տնտեսության պայմաններում արհեստագործությունը ամբողջությամբ ապացուցել է իր կենսունակությունը, թույլ է տալիս հետևություն անել, որ ժամանակի ընթացքում այն պետք է իր ուրույն տեղը գրավի նաև մեր երկրի հասարակական սոցիալ-տնտեսական կառուցվածքում: Չնայած արհեստագործության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բացակայությանը, ներկայումս էլ բազմաթիվ մարդիկ զբաղվում են լայն սպառման ապրանքների, ինչպես նաև գեղարվեստական իրերի արտադրությամբ: Հանրապետության տարբեր մարզերում կարելի է հանդիպել արհեստագործական յուրահատուկ իրերի, որոնք պատրաստվել են ազգային պատմության և սովորույթների համաձայն: Առանձնանում են որոշակի մարզեր, ուր մինչև օրս էլ գործում են ժողովրդական կիրառման արվեստի /արհեստի/ զանազան ավանդական ճյուղեր: Օրինակ՝ Սյունիքի մարզում խոր արմատներ ունեն բրուտագործությունն ու խեցեգործությունը, Տավուշի մարզում, Արցախում՝ ձեռագործ գորգագորգությունն ու կարպետագործությունը, Արարատի և Արմավիի մարզերում՝ խաչքարագործությունը, արծաթագործությունը, Լոռում և Շիրակում՝ դարբնությունը, փայտարվեստն ու ասեղնագործությունը:

Մինչև 1999 թվականը Հայաստանի Հանրապետության արհեստագործների (արհեստավորների) հիմնական դարբնոց էին համարվում մասնագիտական-տեխնիկական ուսումնարանները (ՄՏՈՒ): Այստեղ ուսուցանվում էին բազմաթիվ արհեստագործական մասնագիտություններ, որոնք ընդգրկում էին կիրառական արվեստների, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, սննդի արդյունաբերության, սպասարկման և այլ ոլորտներ: Սակայն, երբ 1999 թվականին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում ՄՏՈՒ-ները, որպես առանձին ուսումնական հաստատության տիպ, չընդգրկվեցին իրավական դաշտում, գործող հաստատությունները Հայաստանի Հանրապետության նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագրի

շրջանակներում վերակազմակերպվեցին արհեստագործական հոսքով ավագ դպրոցների, միացվեցին այլ մասնագիտական հաստատությունների կամ լուծարվեցին: Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը պահպանվեց 10-12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Հետագայում, կարևորելով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվեց և 2004 թվականին հավանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ռազմավարությունը», ինչի շնորհիվ նույն թվականին վերաբացվեց 26 արհեստագործական ուսումնարան, ուր ներկայումս շուրջ 28 արհեստագործական մասնագիտության ու մասնագիտացման գծով սովորում է մոտ 2500 մարդ:

Չնայած այսօր առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2003 թվականի մայիսի 22-ի N637-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների և դրանց համապատասխան արհեստագործական որակավորումների ցանկը, ներկայումս դեռևս բացակայում է ազգային գեղարվեստա-կիրառական իրերի խմբերի օրենսդրորեն հաստատված ցանկը, ինչպես նաև «Արհեստագործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչը կկարգավորեր այդ գործունեության սոցիալական, իրավական և տնտեսական կողմերը:

Ներկայումս հանրապետությունում կան բավականին մեծ թվով տնտեսվարող սուբյեկտներ, որոնք կարող են դասվել արհեստագործների շարքին: Մեծ մասամբ նրանք չեն կարող գոյատևել շուկայական պայմաններում և ձեռնարկատիրական այլ ձևերի համեմատությամբ ունենալ հավասար մրցակցային հնարավորություններ, քանի որ դրան խոչնդոտում են մի շարք գործոններ, որոնցից էականներն են.

արհեստագործական ծառայությունների և արտադրանքի նկատմամբ ներքին շուկայի սահմանափակ պահանջարկը և արտաքին շուկաներում ներկայացվածության ցածր մակարդակը.

ներդրումային հնարավորությունների սահմանափակությունը (վարկերի անմատչելիությունը, գրավի առարկայի բացակայության պատճառով).

արհեստագործների տնտեսական, շուկայական, իրավական և այլ գիտելիքների անբավարար մակարդակը:

Այսպիսով, ներկա պայմաններում արհեստագործությունը տնտեսական արդյունավետության և սոցիալական կայունության տեսակետից կարևոր դիրք է գրավում, որի զարգացման համար անհրաժեշտ է պետության կողմից ապահովել բազմակողմանի աջակցություն:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության վերջին տարիներին զբոսաշրջության զարգացման միտումները, ռեկրեացիոն ներուժը, բնական լանդշաֆտների, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, որոնք գրավիչ են զբոսաշրջիկների համար, նույնպես հանդիսանում են արհեստագործության զարգացման խթանիչ գործոններ:

3. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արհեստագործության զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

արհեստագործությունը, հանդիսանալով կապիտալի նախնական կուտակման միջոցներից մեկը, ազգաբնակչության լայն շերտերին ապահովում է գոյատևման միջոցներով.

արհեստագործական իրերի արտադրությունը նպաստում է շուկայի՝ ապրանքներով և ծառայություններով հագեցմանը և արտադրության մի շարք հատվածներում կարող է մրցակցել խոշոր արտադրողների հետ.

արհեստագործական արտադրությունը շուկայի փոփոխություններին արագ արձագանքելու հնարավորություն ունի, որն ապահովում է նրա հարաբերական կայունությունը.

արհեստագործության զարգացումը նվազեցնում է գործազրկությունը, հատկապես գյուղական բնակավայրերում նպաստում է աշխատուժի արդյունավետ օգտագործմանը, հետևաբար նաև խթանում է հանրապետությունում աղքատության

կրճատմանը, ինչպես նաև թույլ զարգացած և սահմանամերձ շրջանների բնակավայրերի ամրացմանը.

ազգային ավանդույթների և մշակութային արժեքների պահպանմամբ և զարգացմամբ.

մասնագիտական կրթություն և որակավորում չունեցող երիտասարդության զբաղվածության ապահովմամբ.

արհեստագործության ոլորտում ներգրավումը թույլ է տալիս բացահայտել մարդու անհատական որակական հատկանիշները, նպաստում է նրա ինքնաիրացմանը և շուկայական հարաբերություններում ներգրավմանը.

արհեստագործները միջին դասի մի մասն են կազմում, որոնց գոյատևումն ապահովում է հասարակության կայունությունը:

Պետական աջակցությունը՝ արհեստագործության և արհեստագործական կրթության ու ուսուցման զարգացմանը, առաջին հերթին պետք է ուղղված լինի արհեստագործության համար բարենպաստ տնտեսական, իրավական պայմանների ստեղծմանը և ինքնակազմակերպման աջակցմանը: Հաշվի առնելով արհեստագործական արտադրության և արհեստագործական կրթության ու ուսուցման կազմակերպման յուրօրինակությունը, պետական աջակցությունը պետք է առաջին հերթին ապահովի.

արհեստագործության աջակցության ենթակառուցվածքների ստեղծում.

խորհրդատվական ծառայությունների համակարգի ձևավորում.

հումքի և նյութերի, սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության ապահովում.

գովազդային-մարկետինգային գործունեության, սեմինարների, տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպում.

արհեստագործական մասնագիտություններով կադրերի պատրաստման և վերապատրաստման պայմանների ստեղծում.

կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի և անընդհատ կրթության շարունակականության հնարավորության ապահովում.

սոցիալական գործընկերության և կրթության բնագավառի միջազգային զարգացումներին ինտեգրման ապահովում.

արհեստագործության զարգացման և աջակցության տարածքային ծրագրերի մշակում և իրականացում.

իրավական աջակցություն՝ իրավա-օրենսդրական բազայի ստեղծում, արհեստագործական արտադրանքի նկատմամբ հեղինակային իրավունքի պաշտպանություն, իրավաբանական խորհրդատվություն:

4. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Արհեստագործության ոլորտի զարգացման հայեցակարգը նախատեսվում է իրականացնել 2 փուլով.

4.1 Ոլորտը կարգավորող իրավական փաթեթի ստեղծում.

Անհրաժեշտ է ընդունել «Արհեստագործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, որը կապահովի ոլորտի կազմակերպությունների գործունեության իրավական հիմքերը: Իրավական փաթեթի ստեղծումը կներառի նաև գեղարվեստական խորհրդի ստեղծումը, գեղարվեստական իրերի ցանկի հաստատումը, ինչպես նաև ոլորտի զարգացումը խթանող այլ իրավական և նորմատիվ ակտեր:

4.2 Պետական աջակցության ենթակառուցվածքների ստեղծում.

Այն իրենից կներկայացնի ոլորտի զարգացմանն աջակցող կառույցի ստեղծում: Կառույցի դերը կկայանա ոլորտի զարգացման տարեկան ծրագրերի իրականացումը, ոլորտի կազմակերպություններին նյութական, ֆինանսական, խորհրդատվական, մասնագիտական վերապատրաստման, վերաորակավորման ու որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման և այլ աջակցության ապահովումը, ոլորտի արտադրանքն արտաքին շուկաներում ներկայացնելուն աջակցելը, ցուցահանդեսների կազմակերպումը և այլն:

Վերոնշյալ միջոցառումների իրագործումըն հնարավորություն կտա արհեստագործությունը դարձնել սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացման ներուժ: Այն կապահովի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ամրապնդումը, քաղաքացիների իրավունքների իրական ապահովումը, արհեստագործական արտադրանքի ազատ ստացումը, տարածումը և օգտագործումը, անհատի ինքնազարգացման հնարավորությունների ընդլայնումը: